Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսները և ցուցանիշները

Հաշվետվություն Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակված Մարդկային ներուժի զարգացման զեկույցի (2018թ.) հիման վրա

Luys Lույս®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 1

Ընդհանուր բնութագիր 2

Մեթոդաբանություն 3

Հայաստանի գնահատականները 5

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում 8

ՀՀ Մարդկային ներուժի զարգացման այլ ցուցանիշներ 12

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՄԱԿԶԾ - Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը

ՄՆԶԻ - Մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ՄՆԶԻԱ - Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը՝ հաշվի առնելով անհավասարությունը

ԳԶԻ - Գենդերային զարգացման ինդեքս

ԳԱԻ - Գենդերային անհավասարության ինդեքս

ՀԱԵ - Համախառն ազգային եկամուտ

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ԲՈՒՀ - Բարձրագույն ուսումնական հաստատություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԽՍՀՄ- Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Յուրաքանչյուր տարի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (UNDP) հրապարակում է «Մարդկային ներուժի զարգացման ինդեքս» ցուցանիշը աշխարհի գրեթե բոլոր երկրների համար: Կառույցի կողմից այս ցուցանիշի հրապարակումը նպատակ ունի ընդգծել, որ յուրաքանչյուր երկրի զարգացման կարևորագույն նախապայման է ոչ միայն տնտեսական զարգացումը, այլև մարդիկ և նրանց կարողությունները: Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը երկրների կողմից կիրառվում է տարբեր ծրագրերի, ռազմավարությունների և մեխանիզմների մշակման մեջ: Վերջինս հնարավորություն է տալիս պարզել, թե ինչպես միևնույն կամ ավելի ցածր մեկ շնչին բաժին ընկնող համախառն ազգային եկամուտ ունեցող երկրները կարող են ունենալ ավելի բարձր մարդկային ներուժի զարգացման ցուցանիշներ:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից տվյալ տարվա ՄՆԶԻ-ի հրապարակումը ներկայացնում է նախորդ տարվա տվյալները, և յուրաքանչյուր տարի դիտարկվող երկրների շարքն ու քանակը կարող է փոխվել: Հրապարակումը բաղկացած է մի քանի բաժիններից, որտեղ առանձին ներկայացվում են ընդհանուր բնութագրերը և զարգացումները, տարբեր երկրների ամփոփ տվյալները, մարդկային ներուժի զարգացման ցուցանիշները՝ հիմնական Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը և դրանից ածանցյալ այլ ցուցանիշներ, ինչպիսիք են՝ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը՝ հաշվի առնելով անհավասարությունը (ՄՆԶԻԱ), Գենդերային զարգացման ինդեքսը (ԳԶԻ), Գենդերային անհավասարության ինդեքսը (ԳԱԻ): Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակվող այս տվյալներում ազգային և միջազգային ցուցանիշները կարող են չհամընկնել, քանի որ միջազգային կառույցները ազգային տվյալները ստանդարտացնում են՝

երկրների միջև համեմատականությունը պահպանելու համար, և որոշ դեպքերում առկա է նաև տվյալների անհասանելիություն:

2018թ. ՄԱԶԾ կողմից ամփոփվել է 189 երկրների ՄՆԶ ինդեքսները և հորիզոնականները, այդ տվյալներով 151 երկրների համար հաշվարկվել են նաև ՄՆԶԻԱ ցուցանիշները, 164 երկրների համար՝ ԳԶԻ և 160 երկրների համար՝ ԳԱԻ ցուցանիշները: ՄԱԶԾ կողմից հրապարակմանը կից դիտարկվող երկրների համար ներկայացվում է նաև ՄՆԶ ինդեքսների և հրապարակման մեջ կիրառվող բոլոր ցուցանիշների տվյալների բազան՝ ըստ տարիների: Այդ տվյալները հասանելի են http://hdr.undp.org/en/data կայքում: Ցուցանիշների առավել մանրամասն բնութագրերը և հաշվարկի մեթոդաբանությունը ներկայացվում են տեխնիկական բնութագրերում, որոնք ՄԱԶԾ կողմից ևս հրապարակվում են և փոփոխությունների դեպքում յուրաքանչյուր տարի թարմացվում: Տեխնիկական բնութագրերը ներկայացված են http://hdr.undp.org/sites/default/files/hdr2018_technical_notes.pdf հղմամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը չափում է երկրի մարդկային ներուժի զարգացման միջին առաջընթացը և միավորում երեք ցուցանիշներ՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀԱԵ-ն, մարդու առողջությունն ու կյանքի սպասվող միջին տևողությունը, ինչպես նաև բնակչության կրթական մակարդակը: Այլ կերպ ասած՝ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը ներկայացնում է մարդկային զարգացման հետևյալ երեք հարթությունների բաղադրյալ գնահատականը՝ ապրել երկար և առողջ կյանքով (չափվում է կյանքի տևողությամբ), լինել կրթված (չափվում է գրագիտությամբ) և ունենալ արժանավայել կենսամակարդակ (չափվում է գնողունակության

համարժեքությամբ, եկամտի մակարդակով): Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը երեք առանձին ենթաինդեքսների ամփոփ գնահատականն է, որոնք են՝ կյանքի տևողության ենթաինդեքսը, կրթության ենթաինդեքսը և համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) ենթաինդեքսը: Իր հերթին, նշված յուրաքանչյուր ենթաինդեքսն ունի հաշվարկի իր տարբերակը և դիտարկում է մի շարք ցուցանիշներ: Երկրում կյանքի միջին տևողության ցուցանիշի աղբյուր են ծառայել ՄԱԿ-ի վիճակագրության ինստիտուտի տվյալները:

Կյանքի տևողության ենթաինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով՝ (Vi-Vmin)/(Vmax-Vmin), որտեղ Vi-ն տվյալ երկրում կյանքի միջին տևողությունն է՝ արտահայտված տարիներով, Vmax-ը և Vmin-ը դիտարկվող երկրների շարքում, համապատասխանաբար, առավելագույն և նվազագույն կյանքի միջին տևողության ցուցանիշներն են՝ արտահայտված տարիներով: Երկրում կյանքի միջին տևողության ցուցանիշի աղբյուր է ծառայել ՄԱԿ-ի վիճակագրության ինստիտուտի տվյալները:

Կրթության ինդեքսի գնահատման ժամանակ դիտարկվում է չափահասների ուսման միջին տարիների ցուցանիշը, որը 15 տարեկանից բարձր չափահասների սովորած տարիների միջինն է (ներառում է դպրոցում և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու տարիները): Բացի այդ, հաշվի է առնվում նաև ուսման սպասվող տարիների ցուցանիշը, որն արտացոլում է այն տարիների թիվը, որն անցնելով դպրոցական տարիքի հասած երեխան, կունենա ԲՈՒՀ ընդունվելու համար անհրաժեշտ գրագիտության մակարդակ: Երկրում չափահասների ուսման տարիների ցուցանիշի աղբյուր են ծառայել ՄԱԿ-ի վիճակագրության ինստիտուտի տվյալները: Այսպիսով, կրթության ենթաինդեքսը գնահատելիս հաշվարկվում են երկու առանձին ցուցանիշներ՝ չափահասների

ուսման միջին տարիները և դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները: Վերոհիշյալ երկու ցուցանիշների միջինացված գնահատականի հիման վրա հաշվարկվում է կրթության ենթաինդեքսը:

Կենսամակարդակի գնահատման ժամանակ օգտագործվում է Համախառն ազգային եկամուտը, քանի որ, ըստ ՄԱԿ-ի փորձագետների սահմանման, ՀԱԵ-ն ներառում է ոչ միայն ներքին արտադրությունը, այլև երկրների ռեզիդենտների համար եկամտի զգալի աղբյուր հանդիսացող միջազգային ոչ առևտրային բնույթի փոխանցումները, մարդասիրական օգնությունները և այլն: Հետևաբար, եկամտի ենթաինդեքսը հաշվարկվում է՝ օգտագործելով բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ճշգրտված ՀԱԵ-ի (ըստ գնողունակության համարժեքության, ԱՄՆ դոլար) ցուցանիշը: Կոնկրետ երկրում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ի ցուցանիշի աղբյուր են ծառայել Համաշխարհային բանկի տվյալները:

Կյանքի տևողության, Կրթության և ՀԱԵ-ի ենթաինդեքսների հիման վրա գնահատվում է երկրի ամփոփ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը:

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքս - 2017»-ում երկրները, ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի, դասակարգվել են «շատ բարձր» (1.0-ից մինչև 0.8), «բարձր» (0.798-ից մինչև 0.700), «միջին» (0.699-ից մինչև 0.556) և «ցածր» (0.546-ից ցածր) մակարդակ ունեցող երկրների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը 2017թ.-ին կազմել է 0.755, որի արդյունքում երկիրը՝ դիտարկվող 189 երկրների շարքում զբաղեցրել է 83-րդ հորիզոնականը: Այս հորիզոնականը Հայաստանը կիսում է Թաիլանդի

հետ: Նշված ցուցանիշով երկիրը ամրապնդել է նաև իր դիրքերը որպես մարդկային ներուժի զարգացման «բարձր մակարդակ» ունեցող երկիր:

1990-2017թթ. ընթացքում ՀՀ դիրքերը մարդկային ներուժի զարգացման ցուցանիշների տեսանկյունից բավականին բարելավվել են: Այսպես, 1990-ի համեմատ 2017թ. Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը աճել է 0.124 միավորով՝ 1990-ի 0.631-ի փոխարեն 2017թ. կազմելով 0.755: ՀՀ դիրքերը բարելավվել են նաև նախորդ տարվա համեմատ: Այսպես, 2016-ի 0.749 ՄՆԶ ինդեքսը 2017թ. աճել է 0.006 միավորով, որի արդյունքում երկիրը 2016թ. 84-րդ հորիզոնականից 2017-ին տեղափոխվել է 83-րդ հորիզոնական:

Գծապատկեր 1: ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի դինամիկան



Դիտարկվող ժամանակահատվածում Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի աճը պայմանավորված է եղել նաև մնացած ցուցանիշների դրական աճով: Այսպես, կյանքի տևողությունը 1990-2017թթ. աճել է 6.9 տարով, ուսման միջին տարիներն ավելացել են 1.6 տարով, իսկ դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները՝ 2.3 տարով, ՀՀ համախառն ազգային եկամուտը դիտարկվող տարիներին ավելացել է գրեթե 159.9 տոկոսով:

Աղյուսակ 1: ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի և ՄՆԶԻ հաշվարկման այլ ցուցանիշների զարգացումները

	Կյանքի տևողությունը	Դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները	Ուսման միջին տարիները	Համախառն ազգային եկամուտ*	Մարդկային ներուժի զարգացման ինդեքս
1990	67.9	10.7	10.1	3,518	0.631
1995	68.9	10.2	10.4	2,169	0.605
2000	71.4	11.1	10.8	3,006	0.647
2005	72.6	11.2	10.9	5,594	0.693
2010	73.3	13.0	11.1	7,038	0.728
2015	74.4	13.0	11.6	8,517	0.748
2016	74.6	13.0	11.7	8,350	0.749
2017	74.8	13.0	11.7	9,144	0.755

*ըստ գնողունակության համարժեքության (2011թ.), ԱՄՆ դոլար

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հայաստանը Մարդկային ներուժի զարգացման մակարդակով 2017թ. զիջում է տարածաշրջանի հարևան երկրներին՝ Իրանին՝ 60-րդ հորիզոնական (ՄՆԶԻ՝ 0.798), Թուրքիային՝ 64-րդ հորիզոնական (ՄՆԶԻ՝ 0.791), Վրաստանին՝ 70-րդ հորիզոնական (ՄՆԶԻ՝ 0.780) և Ադրբեջանին՝ 80-րդ հորիզոնական (ՄՆԶԻ՝ 0.757): Նշված երկրների հետ համեմատականը փաստում է, որ Հայաստանը մարդու կյանքի սպասվող միջին տևողությամբ և ուսման միջին տարիների քանակով գերազանցում է հարևան երկրներից շատերին: Հիմնական ցուցանիշը, որով Հայաստանը զիջում է հարևան երկրներին, համախառն ազգային եկամտի ցուցանիշն է:

Աղյուսակ 2: ՀՀ և հարևան երկրների ՄՆԶԻ ցուցանիշների համեմատականը

Երկիր/Ցուցանիշ	Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը	Կյանքի տևողությունը	Դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները	Ուսման միջին տարիները	Համախառն ազգային եկամուտը
Հայաստան	0.755	74.8	13	11.7	9,144
Վրաստան	0.780	73.4	15	12.8	9,186
Իրան	0.798	76.2	14.9	9.8	19,130
Ադրբեջան	0.757	72.1	12.7	10.7	15,600
Թուրքիա	0.791	76	15.2	8	24,804

2017թ. արդյունքներով աշխարհի ամենաբարձր Մարդկային ներուժի զարգացման ինդեքս ունեցող երկրների շարքը գլխավորում է Նորվեգիան: Այդ շարքում են նաև Շվեյցարիան, Ավստրալիան, Իռլանդիան, Գերմանիան, Իսլանդիան, Դանիան, ԱՄՆ-ը, Կանադան և այլն: Ամենացածր Մարդկային ներուժի զարգացման ինդեքս ունեցող երկրների շարքը գլխավորում է Նիգերիան, այդ շարքում են նաև Սիրիան, Սենեգալը, Զիմբաբվեն և այլն: Կյանքի միջին տևողությունը ամենացածրն է Սիեռա Լեոնեում՝ 52.2 տարի, իսկ ամենաբարձրը Հոնկոնգում է՝ 84.1 տարի: Մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ի ամենաբարձր արդյունքն ունի Կատարը՝ 116,818 ԱՄՆ դոլար, իսկ ամենաաղքատ բնակչությունն ունի Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունը՝ 663 ԱՄՆ դոլար:

Եթե փորձենք համեմատական անցկացնել Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի ՀՀ ցուցանիշները այլ երկրների հետ, ակնհայտ է, որ հարևան երկրների շարքում ՀՀ զարգացումը չափազանց մեծ է: 2017թ. ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (0.755) ընդամենը 0.002 միավորով է ցածր եղել բարձր Մարդկային ներուժի զարգացման ինդեքս ունեցող երկրների միջին ցուցանիշից (0.757) և Եվրոպական ու Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշից (0.771): Եվրոպական և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում ՀՀ ցուցանիշին շատ մոտ է Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշները, որոնք զբաղեցրել են ՄԶԻ գնահատականով համապատասխանաբար 80-րդ և 70-րդ հորիզոնականները:

Աղյուսակ 3: Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ՄՆԶԻ ցուցանիշների և դրանց բաղադրիչների գնահատականները

ՄՆԶԻ հորիզոնականը, 2017թ.	Երկիրը	Մարդկային ներուժի զարգացման ինդեքսավորում	Կյանքի տևողությունը (տարի)	Դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները (տարի)	Ուսման միջին տարիները (տարի)	Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ (ըստ գնողունակության համարժեքության, ԱՄՆ դոլար)	Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ հորիզոնականի և ՄՆԶԻ հորիզոնականի տարբերությունը	ՄՆԶ ինդեքսի հորիզոնականը 2016	ՄՆԶԻ 2017թ.-ի հորիզոնականի փոփոխությունը 2016թ.-ի համեմատ
Մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակ									
25	Սլովենիա	0.896	81.1	17.2	12.2	30,594	12	24	↓ -1
27	Չեխիա	0.888	78.9	16.9	12.7	30,588	11	27	→ 0
30	Էստոնիա	0.871	77.7	16.1	12.7	28,993	10	30	→ 0
38	Սլովակիա	0.855	77	15	12.5	29,467	1	39	→ 1
45	Հունգարիա	0.838	76.1	15.1	11.9	25,393	3	45	→ 0
33	Լեհաստան	0.865	77.8	16.4	12.3	26,150	12	34	→ 1
35	Լիտվա	0.858	74.8	16.1	13	28,314	7	36	→ 1
46	Խորվաթիա	0.831	77.8	15	11.3	22,162	10	46	→ 0
52	Ռումինիա	0.811	75.6	14.3	11	22,646	2	52	→ 0
50	Մոնտենեգրո	0.814	77.3	14.9	11.3	16,779	19	50	→ 0
51	Բուլղարիա	0.813	74.9	14.8	11.8	18,740	13	50	↓ -1
67	Սերբիա	0.787	75.3	14.6	11.1	13,019	18	66	↓ -1
49	Ռուսաստան	0.816	71.2	15.5	12	24,233	3	49	→ 0
58	Ղազախստան	0.8	70	15.1	11.8	22,626	-3	60	↑ 2
Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ									
68	Ալբանիա	0.785	78.5	14.8	10	11,886	23	69	↑ 1
77	Բոսնիա և Հերցեգովինա	0.768	77.1	14.2	9.7	11,716	16	77	→ 0
70	Վրաստան	0.78	73.4	15	12.8	9,186	35	71	↑ 1
80	Ադրբեջան	0.757	72.1	12.7	10.7	15,600	-7	80	→ 0
88	Ուկրաինա	0.751	72.1	15	11.3	8,130	24	90	↑ 2
83	Հայաստան	0.755	74.8	13	11.7	9,144	24	84	↑ 1
108	Թուրքմենիստան	0.706	68	10.8	9.8	15,594	-34	106	↓ -2
112	Մոլդովա	0.7	71.7	11.6	11.6	5,554	22	110	↓ -2
105	Ուզբեկստան	0.71	71.4	12	11.5	6,470	19	107	↑ 2
Մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ									
122	Ղրղզստան	0.672	71.1	13.4	10.9	3,255	32	121	↓ -1
127	Տաջիկստան	0.65	71.2	11.2	10.4	3,317	25	127	↑ 0

ՀՀ ՄՆԶ ինդեքսի ցուցանիշը 0.027 միավորով գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշը (0.728), 0.074 միավորով գերազանցում է զարգացող երկրների միջին ցուցանիշը, ինչպես նաև գերազանցում է տարբեր տարածաշրջանային երկրների միջին ցուցանիշը:

Աղյուսակ 4: ՀՀ և այլ տարածաշրջանների ՄՆԶԻ ցուցանիշների համեմատականը

Տարածաշրջան	ՄՆԶԻ	Կյանքի տևողությունը (տարի)	Դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները (տարի)	Ուսման միջին տարիները (տարի)	Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ (ըստ գնողունակության համարժեքության, ԱՄՆ դոլար)
Հայաստան	**0.755**	**74.8**	**13**	**11.7**	**9,144**
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	0.771	73.4	14.1	10.3	15,331
Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ	0.758	75.7	14.4	8.5	13,671
Հարավային Ասիա	0.638	69.3	11.9	6.4	6,473
Հարավային Աֆրիկա	0.537	60.7	10.1	5.6	3,399
Արաբական երկրներ	0.699	71.5	11.9	7	15,837
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան երկրներ	0.733	74.7	13.3	7.9	13,688
Քիչ զարգացած երկրներ	0.524	64.8	9.8	4.7	2,506
Զարգացող երկրներ	0.681	70.7	12.2	7.3	10,055
Աշխարհ	0.728	72.2	12.7	8.4	15,295

ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի հիման վրա հաշվարկվում է նաև **Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը՝ հաշվի առնելով անհավասարությունը (IHDI):** Թեև 2017թ. ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը կազմել է 0.755, սակայն անհավասարության դիտարկման արդյունքում այդ ցուցանիշը նվազում է 10 տոկոսով՝ կազմելով 0.680: Այդ կորուստը Ադրբեջանի և Վրաստանի դեպքում կազմել է համապատասխանաբար 10 և 12.6 տոկոս: Անհավասարության կիրառման պարագայում բարձր ՄՆԶԻ ունեցող երկրների դեպքում այդ կորուստը կազմում է 16.0 տոկոս, իսկ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների դեպքում՝ 11.7 տոկոս: Մարդկային ներուժի անհավասարության ինդեքսը ՀՀ-ի դեպքում կազմում է 9.8 տոկոս: Հաջորդ ցուցանիշը **Գենդերային զարգացման ինդեքսն է (GDI)**: Այս ինդեքսի հաշվարկման հիմքում դրվում է Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը՝ հաշվի առնելով բնակչության սեռը: 2017թ. Հայաստանում իգական սեռի Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը կազմել է 0.740, տղամարդկանց 0.764-ի դիմաց՝ ձևավորելով 0.969 Գենդերային զարգացման ինդեքսը: Ադրբեջանի և Վրաստանի դեպքում իգական սեռի Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը կազմել է 0.734 և 0.766, իսկ արական սեռի դեպքում՝ համապատասխանաբար 0.773 և 0.786: Արդյունքում Գենդերային զարգացման ինդեքսը Ադրբեջանում կազմել է 0.949, իսկ Վրաստանում՝ 0.975: Գենդերային զարգացման ինդեքսը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների դեպքում կազմել է 0.956, իսկ բարձր ՄՆԶԻ ունեցող երկրների դեպքում՝ 0.957:

Աղյուսակ 5: Գենդերային զարգացման ինդեքսը

	Կյանքի տևողություն		Ակնկալվող դպրոցական կրթության տարիներ		Միջին դպրոցական կրթության տարիներ		Մեկ շնչի հաշվով ՀԱԵ		ՄՆԶԻ		Գենդերային զարգացման ինդեքս
	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	
Հայաստան	77.8	71.4	13.4	12.6	11.7	11.7	6,358	12,281	0.740	0.764	0.969
Ադրբեջան	75.2	69.1	12.6	12.7	10.5	11.0	10,089	21,152	0.734	0.773	0.949
Վրաստան	77.6	69.2	15.3	14.8	12.8	12.8	6,177	12,481	0.766	0.786	0.975
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	77.0	69.7	13.9	14.2	9.9	10.6	10,413	20,529	0.751	0.785	0.956
Բարձր ՄԶԻ ունեցող երկրներ	78.2	74.0	14.3	13.9	8.0	8.6	10,945	18,948	0.740	0.773	0.957

ՄՆԶԻ հաջորդ ցուցանիշը **Գենդերային անհավասարության ինդեքսն է (GII):** Այս ինդեքսը ՀՀ-ում կազմել է 0.262, որը երկիրը դասել է 160 երկրների շարքում 55-րդ հորիզոնականում: 2017թ. խորհրդարանում կանայք կազմել են 18.1 %-ը, և չափահաս կանանց 96.9%-ը ստացել է առնվազն միջնակարգ կրթություն՝ տղամարդկանց 97.6%-ի դիմաց: Յուրաքանչյուր 100.000 ծննդի հաշվով 25 կին մահանում է հղիության հետ կապված խնդիրների պատճառով, իսկ 15-19 տարեկան 1.000 մայրերի դեպքում ծնվում է 23.2 երեխա: Աշխատաշուկայում կանանց մասնակցությունը

2017թ. կազմել է 51.4 %՝ տղամարդկանց 70.6 %-ի համեմատ[1]: Եթե փորձենք նույն համեմատականը անցկացնել ինչպես նախորդ օրինակում, ապա պատկերը կլինի հետևյալը՝

Աղյուսակ 6: Գենդերային անհավասարության ինդեքսը

	ԳԱԻ	ԳԱԻ հորիզոնական	Մայրական մահացության մակարդակ (100.000 ծննդի հաշվով)	Դեռահասի (15-19 տարեկան 1.000 կնոջ հաշվով) ծնելիության մակարդակ	Կանանց թիվը խորհրդարանում (%)	Առնվազն միջնակարգ կրթություն ունեցող բնակչություն (%)		Աշխատուժի մասնակցության մակարդակ	
						Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ
Հայաստան	0.262	55	25	23.2	18.1	96.9	97.6	51.4	70.6
Ադրբեջան	0.318	71	25	53.5	16.8	93.8	97.5	62.9	69.5
Վրաստան	0.350	78	36	45.9	16.0	95.1	96.0	57.9	78.8
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	0.270	—	24	25.5	20.7	78.4	85.9	45.5	70.3
Բարձր ՄԶԻ ունեցող երկրներ	0.289	—	38	26.6	22.3	69.5	75.7	55.0	75.5

Եթե փորձենք դիտարկել նշված բոլոր ցուցանիշները աշխարհի միջին ցուցանիշների հետ, ապա ակնհայտ է այն հանգամանքը, որ դիտարկվող բոլոր ցուցանիշների դեպքում աշխարհի միջին ցուցանիշի հետ համեմատած Հայաստանի արդյունքներն առավել դրական են: Դիտարկվող ցուցանիշների շարքում **Գենդերային**

[1] Տնտեսական ակտիվության (աշխատուժի մասնակցության) մակարդակը հաշվարկվում է՝ հարաբերելով յուրաքանչյուր սեռի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը համապատասխան սեռի աշխատունակ տարիքի բնակչության ընդհանուր թվին: ՀՀ դեպքում ցանկացած ոլորտում, այդ թվում նաև գյուղատնտեսության ոլորտում, հաշվարկին մասնակցել է միայն տնտեսապես ակտիվ բնակչությունը:

անհավասարության ինդեքսը որքան ցածր է, այնքան կանանց և տղամարդկանց միջև անհամապատասխանություններն ավելի փոքր են, ուստի ստացվում է, որ Հայաստանի դիրքերը այս ցուցանիշի շրջանակում ևս դրական է գնահատվում:

Գծապատկեր 2: ՀՀ և աշխարհի Մարդկային ներուժի զարգացման ցուցանիշների համեմատականը



«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*